

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԿՈՄԻՏԵ)
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

- 1) համակարգչային սարքավորումների արդյունավետ շահագործման, տեղեկատվության ընդունման ու փոխանցման ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում.
- 2) մասնակցություն սարքավորումների պահպանման ու նորոգման ծրագրերի և ժամանակացույցերի մշակմանը.
- 3) սարքավորումների թեստային ու կանխարգելիչ ստուգումների անցկացում՝ անսարքությունները ժամանակին հայտնաբերելու և դրանք վերացնելու, կանխարգելիչ և սովորական նորոգումներին մասնակցելու համար.
- 4) LAN-ի զարգացման լավագույն ուղիների մասին առաջարկություններ ներկայացնելը, մասնակցություն ցանցի կառավարման ու մոնիտորինգի համար սարքավորումների և ծրագրակազմի ընտրությանը.
- 5) այնպիսի ցանցային սարքերի աջակցում և ծրագրավորում, ինչպիսիք են՝ VPN դարպասները, երթուղիչները, անջատիչները.
- 6) միջազգային VPN ալիքների, մարմնի տեղական LAN-ի, ներխուժման հայտնաբերման համակարգերի, վստահված սերվերների, երթուղիչների, փոստի դարպասների, վիրտուալ սերվերների կլաստերների և այլ ցանցերի կառավարում.
- 7) ցանցային սարքերի կազմաձևման պահուստային ընթացակարգերի պահպանում՝ սահմանված պահուստային կանոնակարգերին համապատասխան.
- 8) ցանցային ենթակառուցվածքների խափանումների ու անսարքությունների, ժամանակին արձագանքում և շտկում, անհրաժեշտության դեպքում՝ ինքնուրույն փոխազդում ապարատային և ծրագրային ապահովմանը:

Փորձագետ նախատեսվում է ներգրավել պայմանագիր կնքելու օրվանից մեկ տարի ժամկետով:

Փորձագետը պարտավորվում է՝

1. բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները,
2. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

3. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,
4. իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փորձագետի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն տեխնիկական կրթություն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի որևէ մասնագիտությամբ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ,
- մասնագիտական լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության ու գիտելիքների տիրապետում, մասնավորապես՝
 - ցանցային արձանագրություններ, ինչպիսիք են TCP/IP, SSH, FTP, SMTP, Telnet, HTTP, HTTPS, SIP, POP, NTP, PPTP, L2TP, IP-Sec, նույնականացման և թույլտվության արձանագրություններ, ինչպիսիք են PAP, CHAP, CHAP-V2, Kerberos և այլն.
 - OSI փոխգործունակության տեղեկանքի մոդելը (L1-L7).
 - ցանցային սարքավորումների տեղադրման և գործարկման սկզբունքները.
 - ցանցային ենթակառուցվածքի աշխատանքի դիտարկման սկզբունքներն ու մեխանիզմները.
 - ցանցային անվտանգության սկզբունքները.
 - աշխատանքի պաշտպանության, անվտանգության, արդյունաբերական սանիտարական ու հրդեհային պաշտպանության կանոնները և նորմերը.
 - ցանցի դասավորությունը և տեղաբանությունը, ցանցային սարքերի ֆիզիկական տեղադրությունը:

Չի թույլատրվում պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտներ չստանալու դեպքում:

Աշխատանքի վայրը՝ քաղ. Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի վարչական շենք:

Փորձագետը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի՝ դիպլոմի (դիպլոմների), վկայականի (վկայականների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) համապատասխան մարմնից (մարմիններից)) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի կամ նույնականացման քարտի պատճենը,
- ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կատարվելու է փաստաթղթերի և ինքնակենսագրությունների ուսումնասիրության եղանակով:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին՝ ներկայացնելով անձնագիր կամ էլեկտրոնային փոստի միջոցով (հեռ. 060-43-42-61, էլ. փոստ՝ shoushanik.mkrtchyan@gdca.am):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 13:00-ն, ժամը 14:00-ից մինչև 17:15-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 19.04.2021թ.:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղար
պարոն Միքայել Զալինյանին
քաղաքացի _____ -ից
(անունը, ազգանունը)
_____ հեռախոսահամարը
_____ էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ.
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ.
5. Այլ _____ էջ:
Առդիր՝ _____ էջ:

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: